ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 07

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

ռեկտորատի 04.11. 2020թ. նիստի

Ռեկտորատի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Նիստին ներկա էին ռեկտորատի 16 (տասնվեց) անդամից 12-ը (տասներկու):

Նիստին մասնակցում էին՝

1. Ե. Սերոբյան՝ ռեկտորի ԺՊ
2. Ն. Ավետիսյան՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ
3. Գ. Նիկողոսյան՝ պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ
4. Հ. Մելքոնյան՝ արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն
5. Ա. Սարգսյան՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն
6. Ռ. Քալաջյան՝ ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ
7. Թ.Խաչատրյան՝ գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի տնօրեն
8. Ա. Մկրտչյան՝ ռազմական ամբիոնի պետ,
9. Լ. Մարտիրոսյան՝ բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկանի ԺՊ
10. Թ. Մելիքյան՝ հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան,
11. Ռ. Մարդոյան՝ մանկավարժության ֆակուլտետի դեկան
12. Ա. Հովհաննիսյան՝ անձնակազմի կառավարման և իրավական ապահովման բաժնի պետ

Օրակարգ

1. Համավարակի կանխարգելման նպատակով երկօրյա աշխատանքային գրաֆիկի անցնելու հարցի մասին
2. Երկօրյա աշխատանքային ռեժիմով պայմանավորված՝ ՇՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների մասնաշենքերում ջեռուցման ապահովման մասին
3. Ռազմական դրության պայմաններում ՇՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների մասնաշենքերում հերթապահության կազմակերպման և իրականացման մասին
4. Ուսման վարձավճարների հավաքագրման և ուսանողական զեղչերի/ուսման վարձավճարների փոխհատուցման/ մասին
5. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ – Համավարակի կանխարգելման նպատակով երկօրյա աշխատանքային գրաֆիկի անցնելու հարցի մասին

ՇՊՀ ռեկտորի ԺՊ պրն. Ե. Սերոբյանի առաջարկն այն մասին, որ, առաջնորդվելով ԿԳՄՍ նախարարի 26.10.2020թ. թիվ 01/12.2/27998-20 հանձնարարականով, քննարկման է դրվում երկօրյա աշխատանքային գրաֆիկի անցնելու հարցը: Այդ օրերին ժ. 11:00-14:00-ն կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներից բացի, ըստ անհրաժեշտության, վերջիններիս որոշմամբ ու նախնական հանձնարարականով, աշխատանքի կներկայանան նաև այն աշխատակիցները, որոնց գործունեությունը պայմանավորված է իրականացվող աշխատանքների բովանդակությամբ:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հավանություն տալ ներկայացված առաջարկին և կառուցվածքային ստորաբաժանումներում աշխատանքները կազմակերպել և իրականացնել աշխատանքի վայրում ու հեռավար/առցանց տարբերակների համադրմամբ:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝
Կողմ՝12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2. ԼՍԵՑԻՆ – Պայմանավորված երկօրյա աշխատանքային գրաֆիկի անցնելու անհրաժեշտությամբ՝ ՇՊՀ ռեկտորի ԺՊ պրն. Ե. Սերոբյանը նախ ներկայացրեց, թե ՇՊՀ-ի, ավագ դպրոցի, ռազմական ամբիոնի, քոլեջի մասնաշենքերի շուրջօրյա և ամբողջ ջեռուցման սեզոնին անընդմեջ ջեռուցում իրականացնելիս ինչքան գումար է ծախսվել նախորդ տարի և ինչպես կարելի է այդ ծախսերը դարձնել նվազագույն ու արդյունավետ՝ առանց վնաս հասցնելու մասնաշենքերի պահպանմանը: Մասնավորապես՝ մասնաշենքերում անհրաժեշտ ջեռուցումն ու պահանջվող ջերմաստիճանն ապահովելու համար համապատասխան աշխատակիցների համար սահմանել 8-ժամյա աշխատանքային գրաֆիկ/օր՝ պահպանելով նրանց հետ կնքված պայմանագրերի և աշխատանքային օրենսգրքի պահանջները:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հավանություն տալ ներկայացված առաջարկին։

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝
Կողմ՝12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0։

3. ԼՍԵՑԻՆ – ՇՊՀ պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավար պրն. Գ. Նիկողոսյանի հաղորդումն այն մասին, թե ռազմական դրության պայմաններում ՇՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների մասնաշենքերում այսուհետ ինչպես է կազմակերպելու և իրականացվելու հերթապահությունը։ Նա նշեց, որ յուրաքանչյուր նախորդ ուրբաթ օրվա ընթացքում ստորաբաժանումների ղեկավարներին կտրվի նրանց հետ նախապես քննարկված և հաստատված՝ հաջորդ շաբաթվա հերթապահության գրաֆիկը։ Ըստ անհրաժեշտության՝ հատկապես գիշերային ժամերի հերթապահների համար կապահովվի համապատասխան ջեռուցում։

ՈՐՈՇԵՑԻՆ- տեղեկությունն ընդունել ի գիտություն

4. ԼՍԵՑԻՆ – ՇՊՀ ռեկտորի ԺՊ պրն. Ե. Սերոբյանի հաղորդումն ուսման վարձավճարների հավաքագրման և ուսանողական զեղչերի/ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման հարցի մասին։ Նա նշեց, որ հատկապես ՀՀ-ում առկա պատերազմական և համավարակային իրավիճակի պայմաններում անհրաժեշտ է հետևողական, սակայն միևնույն ժամանակ խիստ առանձնահատուկ, ուշադիր և նրբանկատ մոտեցում ցուցաբերել այս աշխատանքների իրականացման ժամանակ, քանի որ, մի կողմից, առաջնային խնդիր է աշխատավարձի՝ ժամանակին վճարելը, իսկ մյուս կողմից՝ ուսանողների, նրանց ծնողների վճարունակությունն ու հոգեբանական իրավիճակը հաշվի առնելը։ Սրանով է պայմանավորված, որ ՇՊՀ-ում այս ուսումնական տարվա ուսանողական զեղչերը/ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցումը կկատարվեն նշված շրջանակների առավելագույն չափով, սակայն չգերազանցելով ֆակուլտետներին հատկացված 10 %-ի սահմանը։

ՈՐՈՇԵՑԻՆ - 2020-2021 ուստարվա հեռակա ուսուցման 1-ին կիսամյակի ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման /ներբուհական զեղչ/ արտոնությունից օգտվելու հնարավորություն ունեցող հեռակա ուսուցման համակարգի ուսանողները մինչև ս.թ. դեկտեմբերի 5-ը ներառյալ կարող են ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթերը։
Պայմանավորված այն հանգամանքով, որ հեռակա ուսուցման համակարգում նույնպես ուսումնական գործընթացն իրականացվում է հիմնականում օնլայն տարբերակով, ուստի անհրաժեշտ է, որ բացի բուհի կայքում և սոցիալական ցանցերում արդեն տեղադրված հայտարարությունից, դեկաններն իրազեկեն ուսանողներին նաև հեռախոսազանգի միջոցով։

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝
Կողմ՝12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0։

5.1 ԼՍԵՑԻՆ – Ընթացիկ հարցերի մեջ լսեցին ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի փոխտնօրեն տ. Ն. Ավետիսյանի հաղորդումը (նա ռեկտորատի աշխատանքներին մասնակցում էր հեռավար/առցանց տարբերակով) բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի երեք ուսանողների՝ առողջական վիճակով պայմանավորված պրակտիկայի չներկայանալու (գտնվել են ինքնամեկուսացման մեջ) և նրանց լրացուցիչ ժամանակացույցով պրակտիկա անցկացնելու հնարավորություն տալու հարցի մասին։ Նա նշեց, որ վերոհիշյալ ուսանողներն ինքնամեկուսացումից դուրս են եկել, ուստի անհրաժեշտ է նրանց հնարավորություն տալ՝ անհատական ժամանակացույցով անցկացնելու իրենց պրակտիկան։

ՈՐՈՇԵՑԻՆ – Նկատի ունենալով այն հանգամանքը, որ նշված ուսանողները գտնվել են ինքնամեկուսացման մեջ՝ պայմանավորված համավարակով, նրանց թույլ տալ անցկացնելու իրենց կրկնակի պրակտիկան անհատական ժամանակացույցով՝(առանց կրեդիտ վճարման) ս/թ-ի նոյեմբերի 5-21-ը (ստորև կցված աղյուսակի տվյալներին համապատասխան)։

Բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման համակարգի 2019-2020 ուստարվա 2-րդ կիսամյակի կրկնակի պրակտիկա (3-րդ կուրս)։

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝
Կողմ՝12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0։

N	Ուսանողի Ազգանուն, Անուն,Հայրանուն	Ֆակուլտետ	Մասնագիտություն	Պրակտիկայի վայր	Պրակտիկայի մեթոդիստ
1	Ավետիսյան Էդգար Արայի	ԲՄ	ՏՏ	«Ջիհոստ» սերվիս ՍՊԸ-ի տեխնոլոգիական ակադեմիա	Գ. Ասատրյան
2	Նիկոյան Սաշա Վահանի	ԲՄ	ՏՏ	«Ջիհոստ» սերվիս ՍՊԸ-ի տեխնոլոգիական ակադեմիա	Գ. Ասատրյան
3	Ուրուշանյան Արամ Սեյրանի	ԲՄ	Քարտեզագր. և կատասրային գործ	ՀՀԳԱԱ-ի Ա. Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմոլոգիայի ինստիտուտ	Ռ. Սարգսյան

Ռեկտորատի նախագահ՝ ռեկտորի ԺՊ, **Ե. Սերոբյան**

Ռեկտորատի նախագահ՝ ռեկտորի ԺՊ, կատարող նախագահ, ռեկտոր՝	Ե. Սերոբյան
Ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար՝	Կ. Պետրոսյան
Պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ	Գ. Նիկողոսյան
ՈՒսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ	Ն. Ավետիսյան
Ռեկտորի խորհրդական՝	Ս. Շահպարոնյան
Ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվ. բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ՝	Ռ. Քալաջյան
Արհեստակցական կազմակերպության նախագահ՝	Վ. Խաչատրյան
Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն՝	Ա. Սարգսյան
Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն՝	Հ. Մելքոնյան
Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և ՏՏ կենտրոնի տնօրեն՝	Թ. Խաչատրյան
Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկանի ԺՊ՝	Լ. Մարտիրոսյան
Հումանիտար գիտությունների և	Թ. Մելիքյան

արվեստի ֆակուլտետի դեկան՝

Մանկավարժության ֆակուլտետի դեկան՝ Ռ. Մարդոյան

Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան՝ Թ. Հովհաննիսյան

Ռազմական ամբիոնի պետ՝ Ա. Մկրտչյան

Անձն.կառ.և իրավ. ապահովման բաժնի պետ՝ Ա. Հովհաննիսյան.